ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

30 Հունիս, 2020 թվականի № 28-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի թվականի հունիսի 22-ի N 01/3-3/9247-2020 գրությունը և ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներով՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ընկերության կանոնադրական կապիտալում 100 տոկոս պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց 2019 թվականի գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել տարեկան շահութաբաժին՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված չափով:

2. Հաստատել Ընկերության կողմից 2019 թվականի գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժնի չափը՝ 20,540.5 հազար ՀՀ դրամ:

3. Սահմանել Ընկերության 2019 թվականի գործունեության արդյունքներով ստացված 30,918.0 հազար ՀՀ դրամ կազմող զուտ շահույթի բաշխման հետևյալ ուղղությունները՝

   ա) 10,377.5 հազար ՀՀ դրամի չափով Ընկերության պահուստային հիմնադրամի համալրում՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան,

   բ) 20,540.5 հազար ՀՀ դրամի չափով Ընկերության կանոնադրական կապիտալում պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց տարեկան շահութաբաժնի վճարում:

4. Ընկերության կանոնադրական կապիտալում պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինը վճարել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005200630 հաշվեհամարին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշմամբ սահմանված ժամկետում:

5. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

30 Հունիս, 2020 թվականի

ք. Երևան